ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 170 – Ա **05 մայիսի 2020թ.**

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի և «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված միջոցներից Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևանի տարածաշրջանում կորոնավիրուսի վարակի դեմ պայքարի շրջանակներում 2020 թվականի ապրիլի 30-ին կոնտակտավորներին Ծաղկաձոր քաղաքի մեկուսարաններ տեղափոխելու նպատակով հատկացնել 40000/քառասուն հազար/ ՀՀ դրամ:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ՖՍՏՋ վարչությանը՝ սահմանված կարգով կատարել համապատասխան փաստաթղթային ձևակերպումներ, գումարը վճարել մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի տեղակալ Սևակ Դվոյանի միջոցով:

05.05.2020

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SANOSYAN GNEL 1710830069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

ք.Գավառ